

Կ-504¹-08.05.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածում.

1. «Ժա» ենթակետում «հանդիսացող անձը» բառերից հետո լրացնել «իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում փոստային կամ սուրհանդակային ծառայություն մատուցող անձը» բառերը,

2. «իա» ենթակետի առաջին նախադասության մեջ «ավտոմեքենան» բառից առաջ լրացնել «մեկ» բառը, իսկ երկրորդ նախադասության մեջ «վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում» բառերը փոխարինել «նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով» բառերով,

3. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետեր.

«իզ) **ռիսկ** է համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման ժամանակ որևէ դեպք տեղի ունենալու հավանականությունը, որը կապված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային մարմինների կողմից կիրառվող այլ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտման հետ, ինչպես նաև խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության անվտանգության, ներքին շուկայի և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովմանը»,

իէ) **ռիսկերի կառավարում** է համարվում ռիսկերի ծագման հավանականությունը նվազեցնող ու կանխարգելող միջոցների համալիր կիրառումը,

իը) **մաքսային հայտարարագրում** է համարվում այն գործողությունը, որով հայտարարատուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով արտահայտում է ապրանքներն որոշակի մաքսային ռեժիմով հայտարարագրելու իր մտադրությունը,

իթ) **արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող** է համարվում այն անձը, որը մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կամ փոխադրման իր կողմից իրականացվող գործողություններով ներգրավված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ կարգավորվող իրավահարաբերություններում,

լ) **լիազորված տնտեսական օպերատորը** սույն օրենսգրքով սահմանված չափանիշներին համապատասխանող արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մաքսային մարմինների կողմից տրամադրվող կարգավիճակ է, որը հաստատվում է վերադաս մաքսային մարմնի կողմից վարվող՝ լիազորված տնտեսական օպերատորներին միասնական էլեկտրոնային գրանցամատյանում այդ անձանց հաշվառմամբ և որի տրամադրման դեպքում անձը լիազորված է կիրառելու կամ, նրա նկատմամբ սույն օրենսգրքով սահմանված կարգով կիրառվում են հատուկ (այդ թվում պարզեցված) ընթացակարգեր.

լա) **նախնական որոշումը** սույն օրենսգրքով սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից տրամադրվող՝ ներմուծվող կամ արտահանվող ապրանքների դասակարգման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթն է:»:

Հոդված 2. Օրենսգրքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքը և մաքսային սահմանը

Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ցամաքային, ջրային և օդային տարածքը, որոնց սահմանագծերը համարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 16-րդ հոդվածում լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Մինչև ապրանքների և տրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելը, տեղափոխողի կամ նրա լիազորած անձի կողմից վերադաս մաքսային մարմին էլեկտրոնային ձևով կարող է ներկայացվել նախնական տեղեկատվություն՝ տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ: Նախնական տեղեկատվության ցանկը, տրամադրման

կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

Հոդված 4. Օրենսգրքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 17.՝ Մաքսային մարմինների կողմից նախնական որոշման տրամադրումը

1. Յուրաքանչյուր անձ կարող է վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված ձևով դիմում ներկայացնել վերջինիս՝ մաքսային օրենսդրության կիրառման ընթացակարգերի վերաբերյալ նախնական որոշում ստանալու նպատակով: Նախնական որոշումը մաքսային մարմնի կողմից կարող է չտրամադրվել, եթե կապված չէ կոնկրետ գործարքի հետ: Մաքսային մարմինների կողմից նախնական որոշման տրամադրումն իրականացվում է վճարովի՝ սույն օրենսգրքով սահմանված չափով, կարգով և ժամկետներում: Այն դեպքերում, երբ մաքսային մարմնի կողմից իրականացվում են նախնական որոշման տրամադրման հետ կապված ծախսեր, դիմումատուին մաքսային մարմինների կողմից նախնական որոշման տրամադրումից հետո եռօրյա ժամկետում վճարում է նաև մաքսային մարմնի կողմից իրականացված ծախսերը՝ դրանք հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում:

2. Մաքսային մարմնի նախնական որոշումը կիրառվում է մաքսային մարմնի և այդ տեղեկատվությունը տնօրինողի կողմից՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ծածկագրերին համապատասխան:

3. Մաքսային մարմնի նախնական որոշումը կիրառվում է միայն տեղեկատվության տրամադրման պահից հետո իրականացվող գործարքների մասով:

4. Մաքսային մարմնի նախնական որոշումը գործում է տրամադրման օրից երեք տարի:

5. Մաքսային մարմնի նախնական որոշումը դադարում է գործել, երբ.

ա) օրենսդրական փոփոխությունների արդյունքում փոխվում են որոշման մեջ ներկայացված տեղեկատվությանն առնչվող դրույթները,

բ) փոփոխություն է կատարվում արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում,

գ) փոփոխություններ են կատարվում միջազգային պայմանագրերի անդամակցության շրջանակներում, եթե այդպիսի փոփոխություններն առնչվում են նախնական որոշմանը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի «ա» և «գ» ենթակետերում նշված դեպքերում նախնական որոշումը դիմումատուի կողմից կարող է օգտագործվել առավելագույնը դրա վերաբերյալ պաշտոնական հրապարակումից կամ դիմումատուին տեղեկացումից հետո ևս վեց ամիս, եթե մինչև տեղեկատվության գործողության դադարման վերաբերյալ պաշտոնական հրապարակումը կամ տեղեկացումը դիմումատուի կողմից կնքվել է համապատասխան ապրանքների ձեռքբերման կամ իրացման պայմանագիր: Նախնական որոշման տնօրինողը եռօրյա ժամկետում տեղեկացվում է այդպիսի որոշման անվավեր ճանաչվելու վերաբերյալ:

8. Մաքսային մարմինների կողմից տրամադրված նախնական որոշումը կարող է կիրառվել հետևյալ նպատակներով.

ա) արտահանման կամ ներմուծման ժամանակ վճարման ենթակա վճարների որոշման համար,

բ) արտահանման ժամանակ գերավճարները վերադարձնելու համար,

գ) մաքսային ձևակերպումների նպատակներով պահանջվող ոչ սակագնային կարգավորման միջոցների որոշման համար:

Հոդված 5. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածներ.

Հոդված 17¹. Մաքսային մարմինների կողմից նախնական որոշումների կայացումը

1. Սույն օրենսգրքի իմաստով նախնական որոշում է համարվում մաքսային մարմինների կողմից մաքսային օրենսդրությանը համապատասխան տրամադրվող փաստաթուղթ, որը իրավական ուժ ունի ինչպես որոշումը ստացող, այնպես էլ այն անձանց համար, որոնք մաքսային մարմնից նախնական որոշում ստանալու համար ներկայացնում են նույն տեղեկատվությունը: Մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված նախնական որոշումների ստացման համար դիմում ներկայացրած անձը պետք է տրամադրի բոլոր այն տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք պահանջվում են մաքսային մարմինների կողմից այդ որոշման տրամադրման համար:

2. Մաքսային մարմինների կողմից նախնական որոշումը ընդունվում է մաքսային մարմնին դիմումը ներկայացնելու օրվանից երեք ամսյա ժամկետում: Եթե մաքսային մարմինը սույն օրենսգրքով սահմանված ժամկետում չի կարող տրամադրել համապատասխան որոշում, ապա ներկայացված դիմումի ուսումնասիրության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև վեց ամիս ժամկետով: Այդ դեպքում մաքսային մարմինը մինչև ժամկետի ավարտը տեղեկացնում է դիմումատուին ժամկետի երկարաձգման և այդպիսի երկարաձգման պատճառների

մասին, ինչպես նաև տեղեկացնում է որոշման կայացման նոր ժամկետի վերաբերյալ:

3. Մաքսային մարմինների կողմից տրամադրված նախնական որոշումը պետք է գրավոր հիմնավորված լինի, և կարող է բողոքարկվել դիմումատուի կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ ստանալու օրվանից տասն օրվա ընթացքում:

4. Մաքսային մարմնի կողմից կայացված նախնական որոշումը կարող է անվավեր ճանաչվել, եթե այն ընդունվել է ոչ ճիշտ կամ ոչ լիարժեք տեղեկությունների հիման վրա և.

ա) առկա է հիմնավորված ապացույց, որ դիմումատուին հայտնի է եղել կամ պետք է հայտնի լիներ տեղեկությունների ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք լինելը,

բ) այդպիսի որոշում չէր կարող ընդունված լինել ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության հիման վրա:

5. Անվավեր ճանաչված որոշման գործողությունը դադարում է այն օրից, երբ ընդունվել է որոշում՝ նախնական որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

6. Նախնական որոշումն անվավեր ճանաչելու դեպքում մաքսային մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դրա վերաբերյալ այն անձին, որին տրամադրվել է այդ որոշումը:

7. Մաքսային մարմնի կողմից տրամադրված նախնական որոշումն անվավեր է ճանաչվում սույն հոդվածով թվարկված դեպքերից բացի այլ դեպքերում, եթե այդպիսի որոշման ընդունման համար չեն պահպանվել սույն օրենսգրքով սահմանված նախապայմանները կամ այդ նախապայմանները չեն կարող պահպանվել:»:

Հոդված 17². Մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկումը

Մաքսային մարմնի և մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից ընդունված որոշումները, իրականացրած գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 6. Օրենսգրքի 47¹-րդ հոդվածի 1-ին կետից հանել «այդ տարածքից ապրանքներ արտահանելը,» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 47²-րդ հոդվածի վերնագրում և բովանդակության մեջ «ներմուծում ազատ տնտեսական գոտի ռեժիմով բաց թողնված» իսկ 47³-րդ հոդվածի վերնագրում և բովանդակության մեջ՝ «ներմուծում ազատ տնտեսական գոտի ռեժիմով» բառերը փոխարինել «Ազատ տնտեսական գոտում» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 53-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«4. Միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող այն ապրանքները, որոնց ստացումից Համաշխարհային փոստային կոնվենցիայով սահմանված կարգով հրաժարվել են առաքողը և նրա կողմից լրացված հայտարարագրում նշված անձինք, ձևակերպվում են «Սեփականության իրավունքից հրաժարում հոգուտ պետության» կամ «Ոչնչացում» մաքսային ռեժիմներով՝ փոստային կամ սուրհանդակային ծառայություն մատուցող անձի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած պարզեցված կարգի և ձևի համապատասխան հայտարարագիր լրացնելու միջոցով:»:

Հոդված 9. Օրենսգրքի 67⁴-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազատ տնտեսական գոտու սահմանագծով տեղափոխվող՝ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված ապրանքները, այդ թվում՝ շինարարություն, ինչպես նաև շենքերի շահագործում իրականացնելու նպատակով ձեռք բերված ապրանքները հաշվառվում են ազատ տնտեսական գոտու շահագործողի և կազմակերպչի կողմից՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով, և ոչ ուշ քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող տասներորդ օրը ներկայացվում են վերադաս մաքսային մարմին:»:

Հոդված 10. Օրենսգրքի 67⁵-րդ հոդվածում.

1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Ներմուծում ազատ տնտեսական գոտի» ռեժիմով բաց թողնված, ինչպես նաև ազատ տնտեսական գոտում արտադրված ապրանքները Հայաստանի Հանրապետության ներքին շուկա կարող են մուտք գործել միայն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով ձևակերպվելուց հետո:

2. «Ներմուծում ազատ տնտեսական գոտի» ռեժիմով բաց թողնված, ինչպես նաև ազատ տնտեսական գոտում արտադրված ապրանքները Հայաստանի

Հանրապետության տարածքից կարող են արտահանվել «արտահանում ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում» ռեժիմներով:»:

Հոդված 11. Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 68. Մաքսային միջնորդը (բրոքերը)

1. Մաքսային միջնորդը (բրոքերը) մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության անձն է, որը հանդես է գալիս իր և ապրանքներ տեղափոխող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

2. Մաքսային միջնորդի գործունեություն իրականացնող անձը պարտավոր է ունենալ բանկային կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված՝ մաքսային միջնորդի գործունեության արդյունքում առաջացած մաքսային վճարների, տույժերի և տուգանքների վճարման երաշխիք, կամ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված ծածկույթ՝ տարեկան առնվազն.

ա) 150 մլն. դրամի չափով՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 1-ը իրականացվող գործունեության համար,

բ) 300 մլն. դրամի չափով՝ 2016 թվականի հունվարի 1-ից հետո յուրաքանչյուր տարվա ընթացքում իրականացվող գործունեության համար:

3. Մաքսային միջնորդը իր և ապրանքներ տեղափոխող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա կարող է հանդես գալ.

1) ուղղակի՝ երբ միջնորդը գործում է ապրանքներ տեղափոխող անձի անունից և նրա հաշվին, այսինքն՝ միջնորդը հանդես է գալիս որպես հայտարարատու, իսկ հայտարարագրված տեղեկությունների ճշտության համար պատասխանատվություն է կրում տեղափոխողը,

2) անուղղակի՝ երբ միջնորդը գործում է իր անունից և տեղափոխողի միջոցների հաշվին, այսինքն՝ միջնորդը հանդես է գալիս որպես հայտարարատու և պատասխանատվություն է կրում հայտարարագրված տեղեկությունների ճշտության համար:

4. Նախքան մաքսային հսկողության հետ կապված գործողություններ իրականացնելը, միջնորդը մաքսային մարմիններին հայտարարում է իր՝ ուղղակի կամ անուղղակի հանդես գալու հանգամանքը՝ հաստատելով դա համապատասխան լիազորագրով: Մաքսային մարմիններին լիազորագիրը չներկայացնելու դեպքում միջնորդը համարվում է իր անունից և իր միջոցների հաշվին գործող:

5. Ուղղակի հանդես գալու դեպքում միջնորդի կողմից իրականացվող մաքսային ձևակերպումների հետ կապված գործունեության ընթացքում ի հայտ եկած մաքսային կանոնների խախտումների համար պատասխանատվությունը կրում է ապրանքներ տեղափոխող անձը, իսկ անուղղակի հանդես գալու դեպքում պատասխանատվությունը կրում է միջնորդը, ինչպես սույն օրենսգրքով նախատեսված՝ բանկային կամ վարկային կազմակերպության երաշխիքի կամ ապահովագրական ընկերության տրամադրած ծածկույթի այնպես էլ դրանցով նախատեսված միջոցների սպառման դեպքում՝ իր սեփական միջոցների հաշվին:

6. Մաքսային միջնորդի (բրոքերի) և ապրանքներ տեղափոխող անձի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նրանց միջև կնքված պայմանագրով:»:

Հոդված 12. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «գ», «է» ենթակետերը ուժը կորցրած ճանաչել, իսկ «գ», «դ», «ե» ենթակետերում լրացնել «, եթե միջնորդը հանդես է գալիս սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «բ» մասում սահմանված կարգավիճակով:» բառերով:

Հոդված 13. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր «ե» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե) ունենալ բանկային կամ ապահովագրական կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված երաշխիք, կամ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված ծածկույթ՝ տարեկան առնվազն 30 մլն. դրամի չափով:»

Հոդված 14. Օրենսգրքի 73-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 12.1 -րդ գլուխ.

«ԳԼՈՒԽ 12.1

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 73¹. Լիազորված տնտեսական օպերատորները

Լիազորված տնտեսական օպերատորների կարգավիճակ ստացած անձինք իրավունք ունեն կիրառել սույն օրենսգրքով սահմանված՝ արտահանման և ներմուծման պարզեցված ընթացակարգեր, ինչպես նաև օգտվում են մաքսային վճարների վճարման ժամկետի հետաձգման հնարավորությունից:

Հոդված 73². Մաքսային մարմինների կողմից լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրելու կարգը

1. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալու նպատակով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողը վերադաս մաքսային մարմին պետք է ներկայացնի դիմում և նախորդ երեք տարիների ընթացքում իրականացրած գործունեության ինքնագնահատման թերթիկ, որի ձևը, և լրացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Մաքսային մարմնի կողմից ուսումնասիրվում է անձի նախորդ տարիների ընթացքում իրականացրած գործունեությունը, որի արդյունքում բացահայտված տվյալները համադրվում են անձի կողմից ներկայացված ինքնագնահատման թերթիկում ներառված տեղեկատվության հետ և կայացվում է որոշում.

ա) լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրման վերաբերյալ՝ եթե դիմում ներկայացրած անձը համապատասխանում է սույն օրենսգրքով սահմանված չափանիշներին,

բ) արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողից լրացուցիչ տվյալներ պահանջելու, իսկ դրանցով ներկայացված տվյալների թերի լինելու, կամ կեղծ լինելու վերաբերյալ մաքսային մարմնի կասկածի առկայության դեպքում՝ ստուգում իրականացնելու վերաբերյալ:

Սույն մասի «բ» ենթակետով նախատեսված գործողությունների ավարտից հետո երկամսյա ժամկետում մաքսային մարմինը որոշում է կայացնում լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրելու կամ այդ կարգավիճակի տրամադրումը մերժելու վերաբերյալ:

Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշում է կայացվում նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից մաքսային մարմինների կողմից պահանջված տվյալների տրամադրումից հրաժարվելու դեպքում:

Հոդված 73³. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրելու չափանիշները

1. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրվում է այն անձանց, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին.

ա) լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալու համար մաքսային մարմիններին դիմումի ներկայացման օրվա դրությամբ ունեն արտաքին տնտեսական գործունեության իրականացման առնվազն երեք տարվա պատմություն,

բ) անձի կողմից դիմումի ներկայացման օրվան նախորդող երեք տարիների ընթացքում մաքսային կանոնների խախտումների կամ հանցագործությունների դեպքերի բացակայություն,

գ) դիմումի ներկայացման օրվա դրությամբ հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունների բացակայություն,

դ) մաքսային հսկողության արդյունքում նախորդ երեք տարիների ընթացքում մաքսային վճարների գծով չմարված պարտավորությունների, տույժերի և(կամ) տուգանքների վճարման պարտավորության ժամկետի խախտման բացակայություն,

ե) վերջին երեք տարիների ընթացքում անձի կողմից յուրաքանչյուր տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը կազմում է 50 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ,

զ) անձի կողմից արտաքին տնտեսական գործունեության իրականացում այն երկրների հետ, որոնք վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված չափանիշներով անվտանգության առումով ռիսկային չեն համարվում:

Հոդված 73⁴. Լիազորված տնտեսական օպերատորի համար նախատեսված պարզեցված ընթացակարգերը

Լիազորված տնտեսական օպերատորները կարող են օգտվել հետևյալ պարզեցված ընթացակարգերից.

ա) մաքսային հսկողության համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների ապահովման դեպքում՝ մաքսային հսկողության իրականացման վայրի ընտրություն,

բ) նախնական տեղեկատվության տրամադրման դեպքում մաքսային հայտարարագրի լրացման ժամկետի հետաձգում՝ տասն օրով,

գ) մաքսային հայտարարագրերի, դիմումների և այլ փաստաթղթերի ընդունում առաջնահերթության կարգով,

դ) բանկային կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված՝ վճարման ենթակա մաքսային վճարների չափով երաշխիքի ներկայացման և տեղափոխվող ապրանքների վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված կարգով մաքսային մարմիններին տրամադրված նախնական տեղեկատվության հիման վրա ապրանքների բացթողնման հնարավորություն,

ե) մաքսային վճարների վճարման օրենսդրությամբ սահմանված ժամկետների հետաձգում՝ քսան օրով,

զ) մաքսային մարմիններում համապատասխան պաշտոնատար անձից մաքսային ընթացակարգերին առնչվող հարցեր պարզաբանելու հնարավորություն:

Հոդված 73⁵. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի կասեցման հիմքերը

Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակը կասեցվում է.

1. մաքսային մարմինների կողմից՝ ինքնագնահատման թերթիկում ներկայացված տեղեկատվության անհամապատասխանության հայտնաբերման դեպքում՝ երեք ամիս ժամկետով,

2. լիազորված տնտեսական օպերատորի կողմից վերադաս մաքսային մարմին իր կարգավիճակի կասեցման վերաբերյալ դիմումի ներկայացման դեպքում՝ դիմումում նշված ժամկետով,

3. տուգանքների և (կամ) ժամկետանց մաքսային վճարների վճարման պարտավորության ծագման դեպքում՝ այդ պարտավորությունների կատարման ժամկետով,

4. եթե ընկերության բաժնետերերի կամ մասնակիցների նկատմամբ տնտեսական գործունեության բնագավառին վերաբերող մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ ուժի մտնելու օրվանից մինչև օրենքով սահմանված կարգով դատվածության հանումը կամ մարումը,

5. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված մաքսային կանոնների խախտման առկայության դեպքում, մաքսային կանոնների խախտման արդյունքում պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական որոշման ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի ժամկետով, եթե նոր վարչական իրավախախտում չի կատարվել,

6. մաքսային մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների գծով չկատարված պարտավորությունների հայտնաբերման դեպքում՝ մինչև այդ պարտավորությունների կատարումը:

Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի կասեցման որոշումը ընդունվում է վերադաս մաքսային մարմնի կողմից: Կասեցման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի կասեցման որոշումը եռօրյա ժամկետում, հանձնվում է լիազորված տնտեսական օպերատորին առձեռն կամ պատվիրված փոստով:

Հոդված 73⁶. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի դադարեցման հիմքերը

1. Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակը դադարեցվում է.

ա) անձի դիմումի հիման վրա,

բ) անձի գործունեության դադարեցման դեպքում,

գ) մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ մաքսային կանոնների խախտման արձանագրման դեպքում

դ) լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի կասեցումից հետո սույն օրենսգրքի 73⁵-րդ հոդվածով սահմանված ժամկետներում և պահանջվող գործողությունները չիրականացնելու դեպքում:

Հոդված 73⁷. Մաքսային մարմինների կողմից լիազորված տնտեսական օպերատորների էլեկտրոնային գրանցամատյանի վարումը

Մաքսային մարմիններն իրականացնում են լիազորված տնտեսական օպերատորների էլեկտրոնային գրանցամատյանի վարումը՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 15. Օրենսգրքի 81-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

« Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատորի կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար, որպես մաքսային արժեք, հիմք է ընդունվում միջազգային պայմանագրերով սահմանված ձևով առաքողի կողմից լրացված փոստային մաքսային հայտարարագրում արտացոլված արժեքը: Եթե նշված փաստաղթուղթը չի կարող ներկայացվել, ապա մաքսային արժեքի որոշումը Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 16. Օրենսգրքի 82-րդ հոդվածում.

1. առաջին պարբերությունից առաջ շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրման ենթակա այլ տեղեկությունների հետ մեկտեղ հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող կամ նրա կողմից լիազորված անձը:»

Հոդված 17. Օրենսգրքի 86-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 18. Օրենսգրքի 96-րդ հոդվածի

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի արժանահավատությունը կամ դրա որոշման եղանակի ճշտությունը մաքսային մարմինների կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով ստուգելու անհրաժեշտության դեպքում ապրանքների մաքսային ձևակերպումը և բացթողումն իրականացվում են հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքով (գործարքի գնի), մաքսային վճարների վիճելի գումարին համապատասխան մինչև 60 օր ժամկետով բանկային կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված երաշխիքի առկայության դեպքում՝ հետագայում ըստ վերջնական ընդունված որոշման վերահաշվարկված մաքսային վճարների և վճարված մաքսային վճարների դրական տարբերությունը պետական բյուջե վճարելու պայմանով:

2. 2.1-րդ մասում «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

Հոդված 19. Օրենսգրքի 97²-րդ հոդվածի.

1. 1-ին մասի «սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի» բառերով:

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայտարարատուի կողմից մաքսային վճարների և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ վճարելու համար՝ երաշխիքի ժամկետով հաշվարկված տույժերի վճարման բանկային կամ վարկային կազմակերպությունների տրամադրած երաշխիքի ներկայացման դեպքում, մաքսային վճարների վճարումը իրականացվում

է ապրանքների բաթողումից հետո երաշխիքի գործողության ժամկետում, սակայն ոչ ուշ, քան բացթողման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում, որի դեպքում տույժեր չեն գանձվում:»:

3. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր.

«3. Բանկային կամ վարկային կազմակերպությունների երաշխիքում նախատեսված կամ սույն հոդվածի 2-րդ կամ սույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին կամ 165-րդ հոդվածի 4-րդ մասերում սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում, տրամադրված երաշխիքի ժամկետը լրանալու օրը մաքսային մարմինները գրավոր դիմում են երաշխիքը տրամադրած բանկային կամ ապահովագրական կամ վարկային կազմակերպություններին, որի հիման վրա բանկային կամ ապահովագրական կամ վարկային կազմակերպությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարում են մաքսային վճարների, և դրանց սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետից ուշ վճարելու համար հաշվարկված տույժերի վճարումը:

4. Բանկային կամ վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերության կողմից սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում, մաքսային վճարների և դրանց սահմանված ժամկետում չվճարելու համար տույժերը գանձվում են օրենքով սահմանված կարգով:

5. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ սահմանված դեպքում մաքսային վճարների վճարման պարտավորությունը կրում է փոստային կամ սուրհանդակային ծառայություն մատուցող ընկերությունը:»:

Հոդված 20. Օրենսգրքի 105-րդ հոդվածի.

1. 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար, մաքսատուրքը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

ա) 0 տոկոս, եթե տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կգ, իսկ ձեռքբերման արժեքը չի գերազանցում 150 հազ. դրամը,

բ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կգ, իսկ ձեռքբերման արժեքը գերազանցում է 150 հազ. դրամը, բայց չի գերազանցում 300 հազ դրամը,

գ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը գերազանցում է 50 կգ, բայց ձեռքբերման արժեքը չի գերազանցում 300 հազ դրամը:

Սույն հոդվածի «բ» և «գ» ենթակետերով սահմանված պարզեցված դրույքաչափով մաքսատուրքը հաշվարկվում է ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքի և սույն հոդվածի «ա» ենթակետում սահմանված արժեքի դրական տարբերության նկատմամբ:

2. Ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար մաքսատուրքը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

ա) 0 տոկոս, եթե տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կգ, իսկ ձեռքբերման արժեքը չի գերազանցում 150 հազ. դրամը,

բ) 2.5 տոկոս, եթե ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կգ, իսկ ձեռքբերման արժեքը գերազանցում է 150 հազ. դրամը, սակայն չի գերազանցում 300 հազ դրամը:

Սույն հոդվածի «բ» ենթակետով սահմանված պարզեցված դրույքաչափով մաքսատուրքը հաշվարկվում է ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքի և սույն հոդվածի «ա» ենթակետում սահմանված արժեքի դրական տարբերության նկատմամբ:

3. 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենսգրքի 110-րդ հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով.

«9. Մաքսային մարմնի կողմից սույն օրենսգրքով սահմանված կարգով նախանական որոշում տրամադրելու համար գանձվում է 30, 000 դրամ մաքսավճար՝ յուրաքանչյուր նախնական որոշման համար:»:

Հոդված 22. Օրենսգրքի 111-րդ հոդվածում.

1. «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող այն ապրանքները, որոնց համար սույն օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ»:

2. Լրացնել նոր «գ» ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«գ) սույն օրենսգրքի 128¹-րդ հոդվածով նախատեսված դրույթների շրջանակներում հայտարարագրված ապրանքները:»

Հոդված 23. Օրենսգրքի 128-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ թղթային, բանավոր, էլեկտրոնային եղանակներով, կամ գործողությամբ՝ ներկայացնելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Թղթային եղանակով հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված հայտարարագրի ձևի լրացված օրինակը մաքսային մարմնին ներկայացնելու միջոցով: Հայտարարագիրը պետք է ստորագրված լինի և պարունակի բոլոր այն տեղեկությունները, որոնք պահանջվում են ընտրված մաքսային ռեժիմի շրջանակներում:

Բանավոր եղանակով հայտարարագրման ժամանակ անձանց կողմից մաքսային մարմիններին բանավոր հայտարարվում են տեղեկություններ տեղափոխվող ապրանքների վերաբերյալ: Բանավոր եղանակով հայտարարագրված տեղեկությունները հաշվառվում են վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

Գործողությամբ հայտարարագրումը իրականացվում է մաքսային սահմանը հատելու պահին, առանց հայտարարատուի կողմից որևէ հայտարարության ներկայացման՝ վերադաս մաքսային մարմին ներկայացված սույն օրենսգրքով սահմանված նախնական տեղեկատվության հիման վրա: Եթե տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվություն չի ներկայացվել, ապա գործողությամբ հայտարարագրումը սահմանային անցակետում Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ պահանջվող մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացմամբ: Գործողությամբ հայտարարագրման դեպքում մաքսային վճարներ չեն գանձվում:

Էլեկտրոնային հայտարարագրումը մաքսային մարմիններին վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված ձևով և կարգով տեղեկատվության ներկայացումն է:

2. 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ապրանքները հայտարարագրվում են արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում ընդգրկված՝ իրենց նկարագրին համապատասխանող ծածկագրերով: Եթե մեկ խմբաքանակում գտնվող ապրանքները դասվում են ԱՏԳ ԱԱ տարբեր ծածկագրերի այնպես, որ հայտարարատուի կողմից կատարված հաշվարկի համաձայն դրանց հայտարարագրման հետ կապված ծախսերը համադրելի են կամ գերազանցում են վճարման ենթակա մաքսային վճարները, ապա հայտարարատուի գրավոր դիմումի հիման վրա մաքսային մարմինները կարող են թույլատրել այդ ապրանքները հայտարարագրել՝ դասելով այն ապրանքի ծածկագրին, որի համար սույն օրենսգրքով նախատեսված է մաքսատուրքի առավելագույն դրույքաչափը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում են սույն պարբերությամբ սահմանված դրույթի կիրառման դեպքերը և հայտարարագրվող ապրանքների տեսակները և բնափրային չափերը:»:

3. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5–րդ մաս.

«5. Էլեկտրոնային հայտարարագրի ներկայացման ժամանակ՝ մաքսային հսկողության ձևերի ընտրության նպատակով, մաքսային մարմինները կիրառում են ռիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված ընտրողականության սկզբունքը:»

Հոդված 24. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդված.

«Հոդված 128¹ . Գործողությամբ հայտարարագրման դեպքերը

1. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատող բոլոր այն տրանսպորտային միջոցները (այդ թվում նաև երկաթուղային), որոնք իրականացնում են բեռնափոխադրումներ կամ ուղևորափոխադրումներ հայտարարագրվում են գործողությամբ:

2. Իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող՝ մինչև 15 հազ. դրամ կամ դրան համարժեք ձեռքբերման արժեք ունեցող ապրանքները հայտարարագրվում են գործողությամբ:

3. Սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 2-րդ մասի «ա» ենթակետերով նախատեսված դրույթների շրջանակներում ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով իրականացվող տեղափոխման դեպքում ապրանքները հայտարարագրվում են գործողությամբ:

4. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բոլոր ապրանքները մինչև համապատասխան մաքսային ռեժիմով ձևակերպումների իրականացումը համարվում են գործողությամբ հայտարարագրված:

5. Վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված կարգով մաքսային մարմիններն իրականացնում են գործողությամբ հայտարարագրված տեղեկությունների հաշվառում»:

Հոդված 25. Օրենսգրքի 130-րդ հոդվածի.

1. 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետ.

«գ) անկախ սույն մասի «ա» ենթակետով սահմանված ժամկետից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ապրանքներ ներմուծելիս՝ դրանց հասցեատիրոջը Համաշխարհային փոստային կոնվենցիայով սահմանված ժամկետում ծանուցելուց հետո տասնօրյա ժամկետում:»:

2. 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 26. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար հայտարարագիրը լրացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված պարզեցված ձևով միջազգային փոստային կամ սուրհանդակային ծառայության համապատասխան աշխատակցի կողմից՝ առաքողի կողմից լրացված հայտարարագրի հիման վրա, ընդ որում որպես հայտարարատու հանդես է գալիս փոստային կամ սուրհանդակային ծառայություն մատուցող ընկերությունը՝ եթե ապրանքներ տեղափոխողը ցանկություն չի հայտնում ինքնուրույն իրականացնել ապրանքների հայտարարագրումը: Եթե ապրանքներ տեղափոխողը ցանկանում է ինքնուրույն իրականացնել ապրանքների հայտարարագրումը, ապա իրականացնում է դա սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 27. Օրենսգրքի 134-րդ հոդվածի.

1. 1-ին մասի.

ա) առաջին նախադասության մեջ «մաքսային մարմին» բառերից հետո լրացնել՝ «թղթային եղանակով հայտարարագրման դեպքում կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի միջոցով՝ էլեկտրոնային հայտարարագրման դեպքում» բառերը

բ) երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ներկայացված մաքսային հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, ինչի կապակցությամբ թղթային եղանակով հայտարարագրման դեպքում՝ մաքսային մարմնի, իսկ էլեկտրոնային հայտարարագրման ժամանակ՝ հայտարարագրման ավտոմատ համակարգի կողմից մաքսային հայտարարագրի վրա նշվում է գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին:»:

գ) երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գրանցված մաքսային հայտարարագիրն ընդունելուց առաջ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ թղթային եղանակով հայտարարագրման դեպքում, կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի կողմից՝ էլեկտրոնային հայտարարագրման դեպքում, իրականացվում է մաքսային հայտարարագրի լրացման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանման ճշտության ստուգում: Գրանցված հայտարարագրում անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում մաքսային մարմինը բանավոր կամ հայտարարագրման ավտոմատ համակարգի միջոցով տեղեկացնում է հայտարարատուին նշվածի վերաբերյալ, ինչի կապակցությամբ հայտարարատուն ներկայացնում է ուղղված հայտարարագիր՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Հայտարարատուի կողմից ստորագրված՝ թղթային կամ էլեկտրոնային մաքսային հայտարարագիրը ընդունվում է մաքսային մարմնի կողմից, ինչի կապակցությամբ հայտարարագիրն տրվում է ընդունման հերթական համար և նշվում է ամսաթիվը, ամիսը և տարին: Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում հայտարարատուն պարտավոր է հայտարարագրի ներկայացման ժամանակ ավտոմատ հայտարարագրման համակարգի միջոցով ծանուցում ներկայացնել մաքսային մարմին՝ հայտարարագրված ապրանքները և մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը մաքսային մարմնի պահանջով գնման ներկայացնելու պատրաստակամության վերաբերյալ:

Հայտարարագրի ընդունումից հետո ռիսկերի կառավարման համակարգի միջոցով իրականացվում է մաքսային հսկողության ուղու ընտրություն:

Թղթային եղանակով ներկայացված մաքսային հայտարարագրերը մաքսային մարմնի կողմից ներմուծվում են հայտարարագրման ավտոմատ համակարգ՝ ընդունվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 28. Օրենսգրքի 134-րդ հոդվածից հետո լրացնել նոր 134¹–րդ հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 134¹. Ապրանքների բացթողման ժամկետները

1. Ապրանքների բացթողումը մաքսային մարմինների կողմից, երբ հայտարարատուի կողմից վճարվել են հայտարարագրման արդյունքում առաջացած մաքսային վճարները, պետք է իրականացվի ոչ ուշ քան հայտարարագրի ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

«Արտահանում՝ ազատ շրջանառության համար» և «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով արտահանվող ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային հայտարարագրի ընդունման պահից ոչ ուշ, քան 4 (չորս) ժամվա ընթացքում: Եթե մաքսային հայտարարագրի ընդունումն իրականացվել է աշխատանքային օրվա ավարտին նախորդող չորս ժամվա ընթացքում, ապա բացթողումն իրականացվում է մաքսային հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա սկզբից չորս ժամվա ընթացքում:

Սույն մասում նշված ժամկետներում ներառվում է նաև մաքսային զննման տևողությունը:

2. Նախնական հայտարարագրման դեպքում ապրանքների բացթողումն իրականացվում է ոչ ուշ, քան ապրանքները նախնական հայտարարագիրը ընդունած մաքսային մարմին ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

3. Անկախ սույն հոդվածով սահմանված դրույթների, հայտարարագրի ընդունումից հետո սույն հոդվածով սահմանված ժամկետները մաքսային մարմնի կողմից կարող են կասեցվել, եթե հայտարարատուի կողմից չեն իրականացվել ապրանքների բացթողման համար օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ միջոցառումները՝ մինչև մաքսային հսկողության համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացումը:»:

Հոդված 29. Օրենսգրքի 135-րդ հոդվածի.

1. 1-ին մասի.

ա) առաջին նախադասության մեջ «ընդունումը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն հոդվածով սահմանված դեպքերում՝ ընդունումից հետո» բառերով:

բ) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մաքսային հայտարարագրի ընդունումից հետո մինչև մաքսային հսկողության ուղու ընտրությունը հայտարարագրի մեջ սխալներ կամ անճշտություններ հայտնաբերելու դեպքում հայտարարատուն կարող է միջնորդություն ներկայացնել մաքսային հայտարարագիրն ընդունած մաքսային մարմին՝ հայտարարագրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար և կատարել փոփոխությունները: Մաքսային հայտարարագրում փոփոխություն կատարելու կարգը և փոփոխման ենթակա տվյալների ցանկը սահմանվում է վերադաս մաքսային մարմնի կողմից:»:

2. 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե մաքսային մարմինների կողմից իրականացրած հսկողության, արդյունքներով պարզվում է, որ տեղափոխվող ապրանքների և(կամ) տրանսպորտային միջոցների վերաբերյալ հայտարարագրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ապա՝ »:

3. 2-րդ մասի «բ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետ.

«գ) մաքսային մարմինների կողմից կարող է որոշում կայացվել մաքսային հայտարարագրում փոփոխություններ և կամ լրացումներ կատարելու մասին:»

4. 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Մաքսային հայտարարագիրը կարող է փոփոխվել հայտարարատուի և մաքսային մարմնի փոխհամաձայնության դեպքում մաքսային մարմնի կամ հայտարարատուի կողմից՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով կամ հայտարարատուի և մաքսային մարմնի փոխհամաձայնության դեպքում՝ անվավեր ճանաչվել մաքսային մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

5. 8-րդ մասից հանել «կամ այդպիսի ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ նախկինում կիրառված մաքսային ռեժիմը փոխելու համար» բառերը:

6. 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագիրը

կարող է անվավեր համարվել՝ ամբողջությամբ կամ մասնակի, փոփոխվել և (կամ) լրացվել՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 30. Օրենսգրքի 148-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 148. Մաքսային ռիսկերի կառավարումը

1. Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինները կիրառում են ռիսկերի կառավարման համակարգ:

2. Ռիսկերի կառավարման համակարգ է համարվում համապատասխան միջոցների համախումբը, որն ապահովում են ռիսկերի կառավարման գործընթացի անընդհատությունը և ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են տվյալների և տեղեկատվության հավաքագրումը, ռիսկի նույնականացումը, վերլուծությունն ու գնահատումը, ռիսկերի պրոֆիլավորումը, ընտրողականությունը, ինչպես նաև գործընթացի և վերջինիս արդյունքների պարբերական վերահսկումն ու վերանայումը:

3. Ռիսկերի կառավարման համակարգն ուղղված է մաքսային մարմինների ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու միջոցով օրենսդրության խախտումների կանխարգելմանը և նվազեցմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն:

4. Ռիսկերի կառավարման սկզբունքները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը, որի հիման վրա վերադաս մաքսային մարմինը հաստատում է ռիսկերի կառավարման գործընթացը:»

Հոդված 31. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասում «կարգով» բառից հետո լրացնել հետևյալ բառերը. «, իսկ այդ ապրանքների դասակարգումը ըստ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի իրականացնում է մաքսային մարմինը»:

Հոդված 32. Օրենսգրքի 159-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 159.Ապրանքի ծագման որոշումը

1. Ապրանքներին ըստ ծագման տրամադրվում է ոչ արտոնյալ ծագման կարգավիճակ կամ արտոնյալ ծագման կարգավիճակ:

2. Ապրանքների ոչ արտոնյալ ծագումը նշանակում է.

ա) Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված սակագնային կարգավորման միջոցների կիրառություն, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնությունների կրառման դեպքերը

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառություն

գ) ապրանքների ծագման հավաստագրերի կամ վկայականների տրամադրում:

3. Ապրանքների արտոնյալ ծագումը նշանակում է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված սակագնային կարգավորման միջոցների կիրառումից ազատում՝ միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթների շրջանակներում:

4. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ծագման երկիրը որոշվում է դրանց նկատմամբ սակագնային և ոչ սակագնային կարգավորման, մաքսային վիճակագրության վարման և ծագման հավաստագրերի կամ վկայականների տրամադրման նպատակով:»:

Հոդված 33. Օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում «քան 30 օր» բառերը փոխարինել «քան ապրանքների բացթողումից հետո 20 օր» բառերով:

Հոդված 34. Օրենսգրքի 182-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ապրանքների ԱՏԳԱԱ ծածկագիրը մյուս տեղեկությունների հետ մեկտեղ հայտարարագրվում է հայտարարատուի կողմից:

Ապրանքների դասակարգումը իրականացվում է միջազգային պայմանագրերով և վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանած ապրանքների դասակարգման հիմնական կանոններով սահմանված դրույթների հիման վրա՝ ապրանքներն արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի խմբերին վերագրելու միջոցով:

Հայտարարագրված ապրանքների ծածկագրերի վերաբերյալ՝ անհամաձայնության դեպքում ծածկագրի վերջնական որոշման լիազորությունը վերապահվում է վերադաս մաքսային մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովին:»:

Հոդված 35. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 36. Սույն օրենքի 9-րդ հոդվածի «ե» ենթակետով նախատեսված դրույթը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում ընդունված «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկություններ

Հ/հ	Առաջարկության հեղինակ	Բովանդակությունը	Եզրակացություն
1	Մարտին Սարգսյան	Հանել նախագծի 31-րդ հոդվածը	Ընդունվել է մասնակիորեն: Հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 31. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բառերով. «, իսկ այդ ապրանքների դասակարգումն ըստ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի իրականացնում է մաքսային մարմինը:»
2	Հրանտ Բագրատյան	Վերանայել Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ տրամադրելու «100 մլն դրամից մինչև 800 մլն դրամ» ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի չափանիշը:	Ընդունվել է: Օրենքի նախագծում «100 մլն դրամից մինչև 800 մլն դրամ» բառերը փոխարինվել են «50 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ» բառերով: